

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿԵՏԵՍԵՆ ԵՐԿԵՐՈՒԹԵԱՆ

Այդի, թուփ, վարդ, սոխակ, օձ, մանուկ, այգեպան, թագաւոր եւ
Աստուած.

Թագաւոր հզօր ունէր զպարտէզ յանկեան իւրոյ տան,
Օր գործէր յաւէժ մեծամեծ երկամբք ոմն այգեպան.
Սա անկեաց անդէն զթուփ վարդենւոյ ըստ իւր հաճութեան,
Տալ թագաւորի յաւուր կաղանդի զվարդ պատուական:

Տայր, բայց թագաւորն տրտմէր ընդ սպիս, զորս անդ նշմարէր,
Օտոխթ հարուածոց ի պարտիլպանէն իմանալ խնդրէր.
Օսա հարկանէ սոխակն անդութ, նա պատասխանէր.
Եոցէ զիւր բաժին առ այն թագաւորն հանապաղ ասէր:

Մանուկն կայտառ, որ ի պարտիլին յաւերժ դտանէր,
Ոտից սոխակին զվարմ եւ թակարդ հնարիւք զնէր.
Եւ մինչ եղիկէ սոխակն ի հարուած վարդին հասանէր,
Ի թակարդ լարից ի մահ անողորմ ձգեալ անկանէր:

Օր դայր կաղանդին, այգեպանն տարաւ զփունջ իւր վարդից,
Օարմացաւ արքայն զի չունէր զսպիս հարուածոց դանից.
Ո՞վրկեաց, ասէ, զվարդն ի թիփն ի կտցէ նորին,
Օի դու մարթացար բերել ինձ զսա ամբողջ խնդաղին:

Մանուկն իմ, ասէ, սպան զսոխակն, զվարդն ազատեաց,
Ինձ բերել զսա ամբողջ առ արքայդ ճանապարհ հորդեաց.
Երբայն առ այն բան անկեալ ի թախիժ ետ զայս պատասխան,
Ո՞յապաղեսցէ առնուլ զիւր բաժին զլուխ քո մանկան:

Թուփն վարդենւոյն չորացաւ յայնժամ մնաց անտրեւ,
Եւ պարտիլպանին ելանէր անթիւ վաստակ ի դիրեւ.
Հացանէ արքայն զինչ է, որ եհար զթուփ վարդենւոյն,
Եսէ պարտիլպանն, իսպառ հատեալ է զիւր սնունդ այգւոյն:

Երբայն ետ առ այն զիւր վճիռ արդար—բնիկ պատասխան
Թէ եհաս այգւոյն առնուլ զիւր բաժին ըստ անպողութեան.
Եսէ այգեպանն, արքայ թուփ վարդին զձեռն իմ ծակոտէ,
Օսա յարմատոյ կորդել եւ այրել արդեօք արժան է:

Երբայն հանձարեղ տայ զիւր պատասխան ըստ արդարութեան
Մի՛ ձեռն մխեր, զի առցէ վարդին թուփն զիւր արժան.
Եսէ այգեպանն արքայ, տրտումեմ թախծեալ տրտմութեամբ
Օձն զիմ մանուկ սպան անդարման թունաւորութեամբ:

Եսէ թագաւորն մի՛ ինչ վշտանար ընդ այն չար զիպուած,
Հասցէ եւ օձին առնուլ զիւր բաժին ըստ իւր արժանեաց.
Եսէ այգեպանն արքայ, սպանի զօձն չարութեան,
Որ եղև առ թի վաղվաղ տարաժամ մանկանս իմ մահուան:
Եսէ թագաւորն միթէ քեզ մնայ այդ գործ խստութեան,
Եւ դու փոյթ լուծցես զվրէժ չարեացդ ըստ արդարութեան

Հասանէր զարոււն, ծաղկէր այն պարտէզ պտղովք զանազան,
Ի յարկ կանանոցն ելանել յայդին հասանէր հրաւան.

Բայց մինչ 'ի պարտէզ զայլին արքունի տիկնայք փառացիք,
Եմենայն արու չունէր մուտ յայդին անշուշտ անկարծիք:

Հիւանդ էր յայնժամ ծերն այն պարտիզպան անկնալ 'ի յայդեոջ
Լայր զիւր չարարաստ վեճակ անայցել յառանձին տեղեոջ .

Ս'ի յօրիորդաց առ նա յեղակարծ հասեալ իջանէր,
Եւ յահի եղեալ, ամբարձնալ զիւր ձայն սաստկութեամբ ճէր:

Հասին փոյթ առ նա դասք օրիորդաց ընդ սեաւ ներքինեաց,
Երկին զայգեպանն 'ի ծանրատաղտուկ շղթայս կապանաց.

Օայրացաւ արքայն, զի ետես այրն այն զիւր հարձ գեղեցիկ,
Եւ զնա դահձիթաց 'ի զլեոյ լերանց առնել ընկեցիկ:

Եսէ պարտիզպանն, արքայ հանձարեղ քո բան կատարի,
Եհա եւ առնում զիմ բաժին մահու ընդ մահուան օձի.

Բայց անս դու արքայ, զի մի վրիպեցի 'ի քէն քո բաժին,
Օհ այդ էր յաւեժ բան քո անաչառ ընդ իս առանձին:

Վարդն 'ի Սոխակէն, սա 'ի մանկանէն, մանուկն յօձէն,
Թուփն 'ի պարտիզէն, ձեռն իմ 'ի թփոյն և օձն յինէն,

Ես 'ի քէն արքայ առի զբաժին ըստ արդարութեան,
Ելլ և դու առցես 'ի տեսունէ քումմէ փոյթ կամ անազան:

Սեռաւ պարտիզպանն եղեալ ընկեցիկ 'ի զլեոյ լերանց,
Չորացաւ այգին, բուսոյց մոլախոտ փոխարէն ծաղկանց.

Ոչ գոյր վարդենի զի տացէ զվարդ 'ի պէտս արքայի,

Ոչ գոյր և սոխակ զի հարցէ կոցաւ զթերթս վարդի.

Ոչ գոյր և չար օձ զի զմանուկն հարեալ սպանցէ.

Ոչ գոյր պարտիզպանն զի լեցի օձին նախանձախնդիր,

Բայց գոյր թագաւորն օրինաց արդար պաշտպան անձնադիր:

Եհա և նմա առնուլ զիւր բաժին ըստ իւրում վճռոյ,

Գալոց էր նմա արդար հատուցումն յաջոյն Լատուծոյ.

Ետես զկանոյս մեռեալ տարածամ յառոյդ հասակի,

Եոին հարձք նորա տարփածուս ինքեանց ըստ հաճոյս սրտի:

Որդիք իւր դտան դաշնակից ազգաց յապտամբութեան,

Գտանք յարքունիս առանց փեսայից թոռունս ծնան.

Իշխանք և առպետք եղեն թշնամի իւրեանց արքայի,

Կորոյս զամենայն, զանձիւք իւր եզիտ անհաշտ թշնամի:

Նախարարք էին, որք զժողովուրդն յոռին կանգնեցին

Սիրելիք նորա զամուրս բերդից անմարտ մատնեցին.

Ինքն 'ի սաստիկ տրամութեանց սրտին փութով փախձանէր,

Երդեօք 'ի զրախտ, թէ 'ի տարտարոս բանտին իջանէր.

Բայց այս է սոոյդ զի աշխարհ նորա եղծեալ քանդեցաւ.

Թաղաւորութիւնն իսպառ վերացեալ բարձաւ վերջացաւ:

Եյս լեցի խրատ ամենայն մարդոյ յընթացս կենաց,

Չառնել այլոց զայն, զոր ոչ կամիցին պատահել ինքեանց:

(Հանգուցեալ) Սիմէովն ծայրագոյն վարդապետ Մուշեղեանց: